ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«23» 04 2021թ.

Հայաստանի Հանրապետության «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՇՊՀ), ի դեմս ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Երվանդ Սերոբյանի, ով գործում է ՇՊՀ Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով միջբուհական համագործակցության ապահովման, կողմերի գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է:

2. Հուշագրի նպատակը և համագործակցության հիմնական ուղղությունները

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև կրթական և գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա/ ՇՊՀ-ում և ԵՊՀ ԻՄ-ում իրականացվող կրթական ծրագրերի մասին տեղեկությունների տրամադրում, համատեղ կամ կրկնակի որակավորմամբ կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների քննարկում և կազմակերպում,

բ/ ՇՊՀ-ում և ԵՊՀ ԻՄ-ում մշակված առարկայական ծրագրերի, կրթական ծրագրերի արտաքին փորձագիտական գնահատման աշխատանքների իրականացում,

գ/ սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների ակադեմիական շարժունության իրականացում՝ նախապես հաստատելով փոխանակման պայմանները, ֆինանսավորումը,

դ/ կրթական ծրագրերի և/կամ առանձին դասընթացների համատեղ մշակում՝ սովորողների համար հնարավորություններ ստեղծելով կրթություն ստանալու նաև հեռաուսուցման միջոցով,

ե/ սովորողների և դասախոսների մասնագիտական վերապատրաստումների, վարպետության դասերի, կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում,

զ/ համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացում,

է/ ՇՊՀ-ի և ԵՊՀ ԻՄ-ի գիտական ամսագրերում համատեղ ուսումնագիտական հետազոտությունների արդյունքների հրատարակում.

ը/ Կողմերի ուսանողների գիտահետազոտական, գիտամանկավարժական, ուսումնական արտադրական պրակտիկաների փոխադարձ կազմակերպում,

թ/ սովորողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի փոխադարձ ղեկավարում և գրախոսում, գիտակրթական և մեթոդական գրականության ու մասնագիտական զարգացմանը նպաստող էլեկտրոնային աղբյուրների տրամադրում, գիտական աշխատությունների, դասագրքերի, ուսումնական նյութերի, ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և խմբագրում,

ժ/ համատեղ հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում,

ժա/ համատեղ կրթական, գիտական ուղղվածության դրամաշնորհային ծրագրերի իրականացում,

ժբ/ մյուս Կողմին արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում որպես գործընկեր ներգրավում,

ժգ/ Կողմերի իրականացրած այլ կրթական, գիտական, մշակութային ծրագրերին, կազմակերպած միջոցառումներին մասնակցություն:

2.3. Կողմերն իրավունք ունեն հանդես գալու Հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու անցկացման նախաձեռնողի դերում:

2.4. Համագործակցության նպատակով, Հուշագրի հիման վրա, Կողմերը պատրաստական են.

ա/ ժամանակին միմյանց փոխանցել համապատասխան տեղեկատվություն, որը վերաբերում է Հուշագրով նախատեսված համատեղ ծրագրերի ու միջոցառումների անցկացմանը,

բ/ անվճար հիմունքներով խորհրդատվություն տրամադրել ծրագրի ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերում,

գ/ ապահովել անհրաժեշտ նյութական բազա և պայմաններ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու և միջոցառումներ անցկացնելու համար,

դ/նախօրոք տեղյակ պահել միմյանց համագործակցության ընթացքում առաջացող խնդիրների միասին և համատեղ ուժերով ապահովել դրանց լուծումը:

3. Հուշագիրն ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները

4.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

4.2. Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1.Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

5. Կողմերի իրավաբանական հասցեները

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան ՈՒսանողական 3 Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Մակարյան Կ.Տ.	«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ Հասցե՝ ք. Գյումրի, փ. Պ. Սևակի-4 Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ե. Սերոբյան Կ.Տ.